Հաստատում եմ
Տնօրեն Ա. Վեզիրյան

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# << ՆՈՐԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>
# ՊՈԱԿ

## ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
## 2022-2023
# ՊԼԱՆ

Վ. Սայամյան

Հաստատված է մանկ. խորհրդի 2022 թ.-ի օգոստոսի 31 –ի նիստում

# ***ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ***

1.Ներածություն /2021-2022 ուսումնական տարվա աշխատանքների հաշվետվություն/:
2. Դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության կազմակերպումն ու ժամանակացույցը:
3.Նոր ուսումնական տարվա գլխավոր խնդիրներն ու նպատակները:
4.Ուսումնական հաստատության 2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորում:
5. Ուսումնական հաստատության տնօրենի տեղակալների,ուսուցիչների, մեթոդական միավորման նախագահների,սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, գրադարանավարի պարտականությունները:
6. Ուսումնական հաստատության հեռանկարային ամսական պլաններ:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նորակերտի միջնակարգ դպրոցի ուսուցչական համակազմի, տնօրինության և ընդհանրապես դպրոցական ողջ անձնակազմի միահամուռ ու սերտ գործունեության շնորհիվ հաջողությամբ ավարտեցինք 2021 -2022 ուստարվա համար պլանավորված ուսումնադաստիարակչական աշխատանքները:Այս ուստարում դպրոցի տնօրինության ուշադրության կենտրոնում են եղել դասի արդյունավետության և որակի բարձրացման հարցերը: Այդ ուղղությամբ կազմակերպվել են փոխադարձ դասալսումներ և բաց դասեր, որոնց միջոցով ուսուցիչը կատարելագործել է իր աշխատանքը՝ ցուցաբերելով մեծ պատասխանատվություն իր աշխատանքի նկատմամբ, ինչպես նաև շտկելով նրանում տեղ գտած թերությունները: Ուսումնասիրությունների ընթացքում ուշադրության են արժանացել առարկայի ուսուցման խորությունը, դասի դաստիարակչական կողմի

ապահովումը, զննական պարագաների հագեցվածությունը, նոր նյութի հաղորդման և ամրապնդման աշխատանքները, գործնական և լաբորատոր աշխատանքների կազմակերպումը և այլն:

Դպրոցի տնօրինության առաջնահերթ խնդիրն է ամրապնդել պարտադիր ուսուցման բնագավառում ձեռք բերած հաջողությունները: Կազմակերպվել են առարկայական օլիմպիադաներ, որոնցում հաղթող ճանաչված դպրոցականները հաղթել են նաև տարածքային և մարզային օլիմպիադաներում :

Դպրոցի տնօրինության ուշադրության կենտրոնում են եղել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները:

Ուսուցիչներին հաջողվել է ոչ միայն հիանալի կազմակերպել դասապրոցեսը, այլ նաև կազմակերպել այնպիսի միջոցառումներ և ցերեկույթներ, որոնք անջնջելի տպավորություն են թողել ոչ միայն մանկավարժների և ուսուցիչների, այլ նաև հյուրերի հոգում: Իսկ տարեվերջյան վերջին զանգն այն համադպրոցական տոնն է, որին սպասում ենք ողջ տարվա ընթացքում՝ ներքին հուզումով և անհանգստությամբ:

Մեծ ուշադրություն է հատկացվել աշակերտի, որպես վաղվա քաղաքացու, անձի սոցիալական որակների ձևավորմանը, նրա պատրաստվածությունը հասարակական կյանքի տնտեսական, քաղաքական ոլորտների բարդ համակարգում մասնակցության համար:

# ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ
## 2022-- 2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

Մանկավարժական գործընթացին մասնակցում են բոլոր նրանք, ովքեր պատասխանատվություն են կրում ստանձնած գործի նկատմամբ: Ներդպրոցական ղեկավարության էությունն ու արդյունավետությունն ապահովվում է ուսուցման բոլոր ներքոհիշյալ օղակների ճշգրիտ, փոխկապակցված և ստեղծագործական աշխատանքով.

1. Դպրոցի կառավարման խորհուրդը, դպրոցի մանկավարժական խորհուրդը և տնօրենը
2. Դպրոցի փոխտնօրենները և կազմակերպիչը
3. Ուսուցիչների մեթոդական միավորումները
4. Ուսուցիչները, դասղեկները
5. Ծնողական խորհուրդը
6. Աշակերտական խորհուրդը

Դպրոցի ուսուցման լեզուն գրական հայերենն է:

Դպրոցի ուսումնական գործընթացն իրականացվում է ՀՀ ԿԳ նախարարի հաստատած օրինակելի ուսումնական պլանով և առարկայական ծրագրերով:

Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին, այն բաժանվում է 2 կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների միջոցով՝ տարեկան գնահատականները: Դպրոցում գործում է գնահատման 10-միավորային համակարգ: Ուսումնական տարվա տևողությունը I դասարանների համար 30 շաբաթ է, II դասարանների համար՝ 32, մյուս դասարանների համար՝ 34 շաբաթ: Ուսումնական պարապմունքների ընթացքում տրվում են արձակուրդներ՝ ՀՀԿԳՆ-ի կողմից հաստատված ժամանակացույցով:

Ուսումնական շաբաթը կազմում է 5 օր, դասաժամը՝ 45 րոպե, երկհերթ: Ուսումնական տարին սկսվում է 2022թ. սեպտեմբերի 1-ին և ավարտվում է 2023թ. մայիսի 26-ին:

Դասերը սկսվում են 9:00-ին .

Ավարտ՝ 17:20

# ՆՈՐ՝ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մանկավարժների կարևորագույն խնդիրներից մեկը համարվում է ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր հնարավորությունների չափով մասնակից դարձնելը, ապահովելով սովորողների՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը:

Նոր՝ 2022-2023 ուսումնական տարում ուսումնական հաստատությունը կառաջնորդվի Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական հաստատության օրինակելի կանոնադրության դրույթներով ու պահանջներով՝ այն է Հանրակրթական ծրագրերի բովանդակության հիման վրա ձևավորել սովորողների անհատականությունը,նրանց նախապատրաստել ինքնուրույն կյանքին և աշխատանքին:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության գործընթացը կարգավորվում է օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով,դրանց համապատասխան ուսուցման կազմակերպման ձևերի, միջոցների ու մեթոդների ամբողջականությամբ:

Ուսումնական հաստատության գլխավոր նպատակն է ձևավորել մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած,հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված, ինքնուրույն մտածող,ստեղծագործող,մարդասեր անձ,որն ընդունակ լինի գնահատել և հարգել ինչպես իրեն,այնպես էլ ուրիշներին:

2022-2023 ուսումնական տարում դասավանդման ընթացքում մեծ ուշադրություն պետք է դարձնել հանրակրթական ծրագրերի բովանդակությանը,որը ներկայացվում է առարկայական ծրագրերի միջոցով և հանրակրթական պետական չափորոշչի համաձայն ներառում է հանրակրթության ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված ու սովորողի կողմից յուրացման համար նախատեսված գիտելիքները,մանկավարժորեն և հոգեբանորեն չափորոշված-հարմարեցված սոցիալական փորձը,մշակութային,բարոյական ու գեղագիտական,ազգային և համամարդկային արժեքները:

2022-2023 ուսումնական տարում հնարավորինս բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը, լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները: Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ – աշակերտ հարաբերությունների նոր՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի կազմակերպմանը: Շարունակել աշխատանքը ուսուցիչների մանկավարժական-մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ: ՈՒսումնասիրել և գործնականորեն կիրառել մանկավարժական-

մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվեվություննների և օրինակելի դասերի միջոցով : ՌԻսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքերը:

Տարվա ընթացքում մասնակցել ԿԱՊԿՈՒ սովորողների բացահայտման ,կարիքների գնահատման գործընթացին ՝համագործակցելով դասղեկ-դասվարների,հատուկ մանկավարժի, ուսուցչի օգնականների ,ՏՄԱԿ-ի հետ: Ներկայացնել տնօրենին կատարված աշխատանքը:Տարվա ընթացքում հետևել, որպեսզի ԿԱՊԿՈՒ սովորողները ստանան համապատասխան աջակցություն և ներգրավված լինեն միջոցառումներում:

Նոր ուսումնական տարում ազգային դպրոցի շարունակական վերակառուցման համար առանձնահատուկ ուշադրություն կդարձվի մայրենիի խոր ու հաստատուն ուսուցմանը,բնական ու մաթեմատիկական առարկաների բազմակողմանի դասավանդմանը,օտար լեզուների վարժ տիրապետմանը,գործնական–լաբորատոր աշխատանքներին, համակարգչային դասերի անցկացմանը, սովորողների գեղագիտական, ֆիզիկական և ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

## Բաժին 1. Պարտադիր կրթության կենսագործում

| Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|
| 2 | 3 | 4 | 5 |
| Կատարել համայնքի պարտուսահա սակ երեխաների վերահաշվառում և ապահովել նրանց ընդգրկումը դպրոց | Օգոստոս | Տնօրինություն, գյուղապետարան | |
| 1-ին դասարան հաճախող երեխա ների տասնօրյա նախապատրաս տական դասընթացների կազմակեր պում | 21-31.08 | Տնօրինություն, դասվ. մեթոդմիավ., հոգեբան | |
| Հնարավորինս բավարար սոցիալ-հոգեբանական միջավայր ստեղծել անապահով ընտանիքների երեխա ների համար | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն ծնող. խորհուրդ, հոգեբան | |
| Սահմանել վերահսկողություն պար բերաբար ուշացումների և անհար գելի բացակայությունների նկատ մամբ, ժամանակին կանխել դրանք, անհրաժեշտության դեպքում առաջ նորդվել օրենքով սահմանված կար գով | Ուստարվա ընթացքում | մասնագ. կրթ. աջակց.գծով տնօր. տեղ., դասղ.,դասվարներ | |
| Կատարել ծնողազուրկ երեխանե րի հաշվառում և նրանց հետ տանել մանկավարժահոգեբանական անհրաժեշտ աշխատանք, ցույց տալ բազմակողմանի աջակցություն | Ուստարվա ընթացքում | մասնագ.կրթ. աջակց.գծով տնօրենի տեղ., կազմ. դասղ., դասվարներ,հոգեբ. | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6. | Դպրոցի առաքելության և նպատակների մասին զրույց զեկուցումներ անցկացնել ծնողների համար | Սեպտեմբեր | Տնօրինություն | |
| 7. | Հետևողական աշխատանք տանել դժվար դաստիարակվող երեխաների ու նրանց ծնողների հետ | Ուստարվա ընթացքում | մասն. կրթ. աջակց.գծով տնօրենի տեղ., դասղեկներ, հոգեբան | |
| 8. | Ուշադրության կենտրոնում պահել դժվար առաջադիմող և մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաներին: | Ուստարվա ընթացքում | մասնագ.կրթ. աջակց.գծով տնօրենի տեղ.. կազմ. դաստ.. հոգեբան | |

## Բաժին 2. Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, որակավորման բարձրացում

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Տարեսկզբին հրավիրել առարկայական մեթոդմիավորումների նիստեր, ժամանակին պլանավորելով նը բաց դասերի աշխատանքային գործունեությունը՝ դպրոցում ուսում նախադպրոցական աշխատանքի արդյունավետ կազմակերպման, առաջավոր փորձի արմատավորման նպատակով | Օգոստոս | Տնօրեն, փոխտնօրեններ | |
| 2. | Ապահովել դասալսումների նպատակամղվածությունը, քննարկումների մասնակցությունը, դասալսումների ընթացքում գրել դիտողություններն ու առաջարկությունները, ընթացքում անդրադառնալ դրանց կատարմանը: Անհրաժեշտ սովորեցնել հանձնարարությունները, ինչպես վարվել լինել կատարված նկատառմամբ | Ուսումնական տարվա ընթացքում | Տնօրինության անդամներ | |
| 3. | Նպատակային ծառայեցնել լաբորատոր պարապմունքները. հետևել, որպեսզի դասը հագեցված լինի բազմազան տեսաձայնագրողական նյութերով, լաբորատոր սարքավորումներով՝ մեծապես կարևորել ՏՀՏ – ների կիրառումը | Ուսումնական տարվա ընթացքում | Տնօրինություն, լաբորանտ, օպերատոր-տեխնիկ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4. | Ուսուցման արդյունքների ստուգման ու գնահատման օբյեկտիվության բարձրացման նպատակով հաճախակի կազմակերպել թեմատիկ ստուգումներ տնօրինության և առարկայական մասնախմբի նախագահի մասնակցությամբ | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն | |
| 5. | Ուսուցիչ-տնօրինության անդամներ Աշխատանքային, ընդհանուր-հոգեբանական և միջանձնային հարաբերությունների էլ ավելի բարելավում՝ ի շահ ուսումնական պրոցեսի հաջողության | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն, հոգեբան | |
| 6. | Խրախուսել և տարածել ուսուցիչների արդյունավետ նորարարական աշխատանքը, ստեղծել այնպիսի միջավայր, որ նրանք ընդհանուր նպատակներն իրագործելիս լրացնեն ու օգնեն միմյանց | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն, առարկ. մ/մ | |
| 7. | Ապահովել մանկավարժական խորհրդում քննարկման ներկայացվող հարցերի հանգամանորեն նախապատրաստումը, գործնական և շահագրգիռ քննարկումը, հանձնարարականների ժամանակին կատարումը | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն, առարկ. մ/մ | |
| 8. | Ավագ դպրոցում համայնքի կազմակերպել քննարկումներ, բանա | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն, առարկ. մ/մ նախ. | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | վեճեր, թեմատիկ ցերեկույթներ, որոնք էլ ավելի կնպաստեն նրանց անձի համակողմանի զարգացմանը, ինքնուրույնության ամրապնդմանը | Ուս.տարվա ընթացքում | Տնօրինություն, առարկ. մ/մ, դաստ. աշխ. կազմ. | |
| 9. | Ուսուցիչների ատեստավորման գործընթացի շարունակականության ապահովում | Ուս.տարվա ընթացքում | Տնօրինություն, առարկ. մմ | |

| | Բաժին 3. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում | | | |
|---|---|---|---|---|
| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Ծանոթություն |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Աշակերտներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով և երաշխավորված մեթոդական գրականությամբ | Օգոստոս | Փոխտնօրեններ, առարկ. մմ | |
| 2. | Նպատակաուղղված աշխատանք կատարել դպրոցը ուսումնադիտողական պարագաներով հարստացնելու ուղղությամբ, օգտագործել առկա տեխնիկական միջոցները | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն | |
| 3. | Ուսուցիչների համար կազմակերպել համակարգչային ուսուցում | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն, ինֆ. ուսուցիչ, օպ. տեխնիկ | |
| 4. | Ուսումնասիրել լաբորատոր գործնական աշխատանքների ծրագրային պահանջների կատարման ընթացքը բնագիտական առարկաներից | Դեկտեմբեր-մայիս | Փոխտնօրեններ | |
| 5. | Կրթական գործընթացի որակի բարձրացման նպատակով կատա | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն, առարկ.մմ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ընել նպատակային գործողություններ, իրականացնել արդյունքների խորքային վերլուծություն, որակական բնութագրում և հետամուտ լինել արված առաջարկությունների ու դիտողությունների ընթացքին | | նախագահներ | |
| 6. | Կատարել առարկայական ուսումնասիրություններ, արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերի նիստերում, մանկավարժական խորհրդում | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն, առարկ. մմ նախագահներ | |
| 7. | Կազմակերպել առարկայական շաբաթներ, մասնօրյակներ, որոնց ընթացքում ա/անցկացնել բաց դասեր, ցերեկույթներ բ/լույս ընծայել պատի թերթեր | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեններ, առարկ. մմ նախ. | |
| 8. | Շարունակել և բարելավել դպրոցական օլիմպիադայի կազմակերպման աշխատանքները։ Նախապատրաստական աշխատանքներն սկսել ուստարվա սկզբից | Դեկտեմբեր | Տնօրինություն, առարկ. մմ նախագահներ | |
| 9. | Առանձնահատուկ վերաբերմունք ձևավորել շնորհալի, ունակ երեխաների նկատմամբ, խթանել նրանց ստեղծագործական աշխատանքը | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն, առարկ. մմ նախ., ուսուցիչներ | |
| 10 | Զննել ավանդական և նորարարական դպրոցների ուսումնական և | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն, | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | դաստիարակչական աշխատանքային ների արդյունավետ համակարգի կայացմանը | | | |
| 11 | Նպատակային աշխատանք կատարել մանկավարժական առաջավոր փորձի տարածման ուղղությամբ | Ուս. տարվա ընթացքում | Տնօրինություն առարկ. մմ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **Բաժին 3. Ենթաբաժիններ** | | | |
| | **Ա. Դասղեկական աշխատանք** | | | |
| 1. | Անցկացնել դասղեկների խորհուրդ դպրոցում, օգնել կազմելու դասղեկական- դաստիարակչական աշխատանքների պլանը և ներ կայացնել քննարկման | 28-31 Օգոստոս 2019թ | Տնօրեն. տնօրենի մասնագ. կրթ.աշակց.գծով տեղ. | |
| 2. | Դասղեկական պլանների կազմման գործընթացում պահանջել դաս ղեկներից, որպեսզի դրանցում ամրագրեն հետևյալ դրույթները<br><br>ա/դաստիարակչական ամուր կոլեկ տիվի ստեղծում, առողջ բարո յահոգեբանական մթնոլորտի ապա հովում, հայեցի դաստիարակության կատարելագործում.<br><br>բ/ Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ: Դասղեկական ժամերը նպատակաուղղել սովորողների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը.<br><br>գ/ Հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունը.<br><br>դ/ կիսամյակն առնվազն երկու անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով, ըստ անհրաժեշտության, նաև ծնողի օրեր<br><br>ե/ յուրաքանչյուր դաս-ում ստեղծել ծնողխորհուրդ /3-5 հոգի/ օգնել ակտիվորեն մասնակցելու ուսում նական գործընթացի կազմակ-ը | Ուստարվա ընթացքում<br><br>սեպտեմբեր | տնօրենի մասնագ. կրթ.աշակց.գծով տեղ., հոգեբան<br><br>տնօրենի մասնագ. կրթ.աշ.գծով տեղ. դասղեկ- դասվարներ | |

| Բ. Գեղագիտական դաստիարակություն | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| ա/ | Հասնել աշակերտների գեղագիտական դաստիարակության արմատական բարելավման | Ուստարվա ընթացքում | տնօրենի մասնագ. կրթ.աջակց.գծով տեղ., ՄԿԿ, դասղեկներ | |
| բ/ | Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքները, կազմակերպել մրցույթներ, կանաչապատել շենքի բակը և շրջակայքը, խնամել դրանք. | սեպտեմբեր | Տնօրեն, տնօրենի մասնագ. կրթ.աջակց.գծով տեղ. , դաստ. աշխ. կազմ. | |
| գ/ | Լույս ընծայել գեղագիտական թեմաներով պատի թերթեր, ձևավորել անկյուններ | Ուստարվա ընթացքում | տնօրենի մասնագ. կրթ.աջակց.գծով տեղ., դաստ. աշխ. կազմ. | |
| դ/ | Անցկացնել ցերեկույթներ, նվիրված մեծ գեղագետների հոբելյաններին. | Ուստարվա ընթացքում | տնօրենի մասնագ. կրթ.աջակց.գծով տեղ., դաստ. աշխ. կազմ. | |
| ե/ | Դպրոցում ստեղծել տնօրինությանը կից գեղագիտական դաստիարակության խորհուրդ. | Հոկտեմբեր | Տնօրեն, տնօրենի մասնագ. կրթ.աջակց.գծով տեղ. | |
| զ/ | Գեղագիտական դաստիարակության խորհրդի աշխատանքներին մասնակից դարձնել համայնքում բնակվող արվեստի և մշակույթի գործիչներին | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն, դաստ. աշխ. կազմ. | |

| Գ. Ֆիզիկական դաստիարակություն | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| ա/ | Սովորողների ֆիզիկական դաստիարակության բարելավման նպատակով բարեկարգել մարզադաշտը. | օգոստոս-սեպտեմբեր | տնօրինություն, ՏԻՄ | |
| բ/ | ԳԲԱ-ի բժշկի միջոցով պարզել աշակերտների առողջական վիճակը, ստեղծել բուժական ֆիզկուլտուրայի հատուկ խմբեր, հետևել պարապմունքների անցկացմանը | սեպտեմբեր | տնօրենի մասնագ. կրթ.աջակց.գծով տեղ., ԳԲԱ, ֆիզկ. ուսուցիչ | |
| գ/ | Բուժ. սենյակը ապահովել անհրաժեշտ պարագաներով և դեղամիջոցներով | սեպտեմբեր | տնօրինություն, ԳԲԱ | |
| դ/ | Պարբերաբար կազմակերպել աշակերտների կողմից նորմատիվների հանձնում | սեպտեմբեր-մայիս | մասնագ.կրթ. աջակց.գծով տնօրենի տեղ., ԳԲԱ, ֆիզկ. ուսուցիչ,բուժքույր | |
| ե/ | Անցկացնել միջդասարանական, միջդպրոցական մրցույթներ | հոկտեմբեր-ապրիլ | ֆիզկ. ուսուցիչ, դասղեկներ | |
| զ/ | Խստորեն վերահսկել դպրոցամերձ հրապարակում խաղադաշտում, լաբորատորիայում անվտանգության և սանիտարական կանոնների | մշտապես | տնօրինություն, տնտեսվար, լաբորանտ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ե/ | պահպանմանը<br><br>Բժշկի կամ բուժքրոջ միջոցով անցկացնել զրույց սովորողների օրվա ռեժիմի անցկացման և հիգիենայի մասին, կիրառել «Առողջ ապրելակերպ» դասընթացի նյութերը | Ուստարվա ընթացքում | տնօրենի մասնագ. կրթ.աշակց.գծով տեղ., բժիշկ /բուժքույր/, դասղեկներ | |

## Դ. Հայրենասիրական դաստիարակություն

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| ա/ | Կազմակերպել միջոցառումներ, նվիրված ՀՀ պետական տոներին, Մեծ Հայրենականին, արցախյան ազատամարտին. | համապ. օրերին և ուստարվա ընթացքում | տնօրինություն, ՆԶՊ ուսուցիչ, դաստ.աշխ. կազմ. դասղեկներ | |
| բ/ | Միջոցառումների շարք նվիրված ՀՀ անկախության 27 տարեդարձին<br>*Ցերեկույթների կազմակերպում*<br>*Մասնակցություն հանրապետության հրապարակում կազմակերպված տոնակատարությանը* | սեպտեմբեր | տնօրենի մասնագ. կրթ.աջակց.գծով տեղ., դաստ. աշխ. կազմ. , դասղեկներ, դասվարներ | |
| գ/ | Թարգմանչաց տոն<br>*Այցելություն մատենադարան, թանգարաններ.* | հոկտեմբեր | Տնօրինություն, հ.լ. և գրակ.,պատմ.մմ, դաստ. աշխ. կազմ.դասղեկներ | |
| դ/ | Շարունակել աշակերտների այցելությունները զորամաս՝ առօրյային, կենցաղին, ռազմական տեխնիկային ծանոթանալու նպատակով. | հոկտեմբեր | տնօրեն, զինղեկ, դասղեկն. | |
| ե/ | Անհրաժեշտ օգնություն ցույց բերել ՆԶՊ կարինետի նյութա | | տնօրինություն, զինղեկ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | տեխնիկական բազան հարըս տացնելու, փոքրի սրահը վերա կառուցելու ուղղությամբ | | | |
| գ/ | Մարտական պատրաստության պարզեցված ծրագրով զորամասի ուսումնական բազայի վրա աշա կերտների հետ պարապմունքների անցկացում | ուստարվա ընթացքում | ԶՄ հրամ., ՆԶՊ ուսուցիչ, տնօրենի մասնագ. կրթ. աջակց.գծով տեղ. | |
| ե/ | Միջոցառումներ նվիրված Մեծ հաղթանակի և Խաղաղության տոնին, Շուշիի ազատագրմանը: Այցելություն եռաբլուր. | ուստարվա ընթացքում մայիս | տնօրենի մասնագ. կրթ.աջակց.գծով տեղ.,պատմ. մ/մ., դաստ. աշխ. կազմ., ՆԶՊ ուս., դասղեկներ | |

## Դ. Աշխատանքային դաստիարակություն

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| ա/ | Բարձրացնել աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը և արդյունավետությունը | ուստարվա ընթացքում | տնօրենի մասնագ. կրթ.աջակց.գծով տեղ., դասղեկներ | |
| բ/ | Աշակերտների ուժերով կազմակերպել ծառերի և ծաղիկների խնամքը | | | |

| Ե. Հոգևոր դաստիարակություն | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Հայ առաքելական եկեղեցու դերը ազգային համախմբման և ազգապահպանության գործում ընդգծելու նպատակով անցկացնել զրույց-զեկուցումներ, դասղեկի ժամեր | ուստարում | դասղեկներ, ՀԵՊ. պատմ. ուսուցիչ | |
| 2. | Անդրադառնալ «Սուրբ Խաչ» ծեսի անցկացմանը, բացատրել դրա խոր հուրդը | սեպտեմբեր | դասղեկներ, ՀԵՊ. պատմ. ուսուցիչ | |
| 3. | Կազմակերպել այցելություններ հայոց հոգևոր տաճարներն ու վան քերը, պատմական վայրերը | ուստարում | դասղեկներ | |
| 4. | Անցկացնել զրույցներ նվիրված հայ առաքելական եկեղեցու 5 տաղավար տոներին կարևորելով նրանցից յուրաքանչյուրի խորհուրդը | ուստարում | դասղեկներ,ՀԵՊ պատմ. ուսուցիչ | |
| 5. | Սուրբ Վարդանանց տոնը վերածել հոգևոր հայրենասիրական տոնի | | դասղեկներ, ՀԵՊ պատմ. ուսուցիչ | |
| 6. | Ուսումնական գործընթացի մեջ ընդգրկել Հայոց եկեղեցու պատմության դասագրքերի ձևավորման ժամանակ օգտագործված հայ մանրանկարչության ճանաչողական նշանակությունը | ուստարում | ՀԵՊ պատմ. ուս. | |

## Բաժին 4. Ներդպրոցական վերահսկողության համակարգ

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 1 | Ստուգել պարտադիր կրթության պա օրենքի սահմանադրական պա հանջի կատարման վիճակը դպրոցում և քննարկել մանկ. խոր հրրդում | հոկտեմբեր | տնօրեն, տնօրենի մասնագ. կրթ.աջակց.գծով տեղ | |
| 2. | Յուրաքանչյուր շաբաթվա վերջում հանրագումարի բերել կատարված աշխատանքները<br><br>ա/լսել տնօրինության անդամների հաղորդումը պլանավորված աշ խատանքների կատարողականի մասին<br><br>բ/բացահայտել թերացումները.<br><br>գ/քննարկել հաջորդ շաբաթվա անելիքները | ուստարվա ընթացքում | տնօրինություն | |
| 3. | Հասնել դպրոցի գործունեության ցուցանիշների էական բարելավ ման | ուստարվա ընթացքում | տնօրինություն, դաստ.աշխ.կազմ. | |
| 4. | Շարունակել <<Բաց դռների օրե րի>> և նախնական կողմնորոշիչ ժողովների անցկացման պրակ տիկան, նպատակ ունենալով ապահովել դպրոցի աշխատանքի առավել թափանցիկությունը և պլանավորման խնդիրների լու ծումը | սեպտեմբեր | տնօրինություն, դասղեկներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5. | Մանկավարժական աշխատողների կարիքներին ու որակների համա պատասխան վերանսկողական ռազմավարության մշակում ու իրականացում նոր պահանջներով | 1-ին կիսամյակ | տնօրինություն | |
| 6. | Ուսումնասիրել դասղեկների կա տարած աշխատանքը և քըն նարկել մանկավարժական խոր հըրդում | մարտ | տնօրենի մասնագ. կրթ.աջակց.գծով տեղ | |
| 7 | Ստուգել տարբեր առարկաներից տրված կիսամյակային ամփոփիչ աշխատանքների քանակն ու որակը, արդյունքները քննարկել տնօրինության խորհրդում | 1-ին կիս. վերջում . | փոխտնօրեններ, մ/մ նախագահներ | |

## Բաժին 5. Աշխատանք ծնողների հետ

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 1. | Հրավիրել դասարանական ծնողա կան ժողովներ | անհրաժեշտից | փոխտնօրեններ, դասղեկներ | |
| 2. | Կազմել ծնողների համար անց կացվող զրույցների ու զեկուցում ների թեմատիկ պլան | անհրաժեշտից | մասնաշ. կրթ. աջակցող տնօրենի տեղ., հոգեբան | |
| 3. | Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովո րողների ուսուցման ու դաս տիարակության բարելավման գոր ծում | ուստարվա ընթացքում | տնօրինություն, հոգեբան | |
| 4. | Ծնողների մասնակից դարձնել սովորողների արտադասարանական, դասարանական աշխատանք ներին | մշտապես | մասնաշ. կրթ. աջակցող տնօրենի տեղ. | |
| 5. | Ծնողների և համայնքի կառավար ման աշխատանքի կազմակերպ ման մակարդակի բարձրացում | ուստարում | տնօրինություն | |
| 6. | Ապահովել ծնողների ակտիվ մասնակցությունը մշակութային և հոգևոր հատուկ օրերին | ուստարում | տնօրինություն, դասղեկներ, ԾԽ տնօրինություն, ՍԽ | |
| 7. | Համախմբվածության և հայրենասիրական աշխատանք տանել դպրոցը համայնքային կրթական կենտրոն դարձնելու համար | ուստարում | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8. | Կազմակերպել զրույց-զեկուցումներ դպրոցական տարիքային փուլերի հիմնախնդիրների մասին երեխաների և ծնողների համար | ուստարում | տնօրինություն, հոգեբան, «Ուրարտու» համալս. դասախ. | |

## Բաժին 6. Ֆինանսատնտեսական գործունեություն և ուսումնանյութական բազայի ամրապնդում

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 1. | Անհրաժեշտ աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսումնատեխնիկական միջոցների, դիդակտիկ պարագաների համալրման և պահպանման ուղղությամբ | ուստարվա ընթացքում | տնօրինություն, տնտեսվար | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6. | Դասղեկների հետ վերջնակա նապես ճշտել սոցիալապես անապահով, որք և միակողանի ծնողազուրկ երեխաների ցուցակը և հնարավորության չափով ապա հովել անվճար դասագրքերով | օգոստոսի վերջ, սեպտ.սկիզբ | տնօրենի մասնագ. կրթ.աջակց.գծով տեղ, դասղեկն. ծնողխորհրդի նախ. | |
| 7 | Կգն երաշխավորված էլեկտրոնային առարկայական ուսումնական նյու թերի օգտագործման արդյունավե տության բարձրացման մասին | հոկտեմբեր | տնօրենի մասնագ. կրթ.աջակց.գծով տեղ | |
| 8. | Սահմանված կարգով և ժամկետ ներում հրավիրել.<br><br>ա/ մանկավարժական խորհրդի նիստերը<br>բ/ առարկայական մմ նիստերը | յուրաք. 2 ամիսը մեկ անգամ | տնօրինություն | |